Հռոմայեցւոց թղթի սկզբում Յիսուսի պատկերն է 12×7,2 սմ. մեծութեամբ (պատկ. 2), նստած բարձրաթիկունք աթոռի վերայ, ծածկուած երկարաձիգ բարձով և զարդարուն լաթով. տունիկայի վերայից ձգել է ուսերին մեծ, մոյգ մանիչակագոյն տոգայ, որ ձախ թեւի վերայով իջնում է ցած, ծածկում ծնկներն ու ոլոքները. կրծքից և ոտների մօտից երևում են տունիկայի գեղեցիկ ծալքերով մասերը, իսկ թեւերի տակից ներքնազգեստի ոսկեզօծ, նեղ թեզանիքը: Ունի բոլորակ և խաչազարդ նիմբուս. գլխի խիտ և կիսեմոնագոյն մազերը ճակատին երկուսի բաժանուած, իջնում են դէպի ուսերը: Դէմքն ամբողջական է, կիսեմոնագոյն, թեթև մորուքով. մեծ աչքերն ինքնամփոփ և մտածկոտ արտայայտութեամբ. գլխի երկու կողմից «Ցս» և «Քս» գրուած, կապոյտի վերայ սպիտակ գծերով. աջով խաչակնքում է և ձախում ոսկեզօծ փաթոյթ բռնել: Պահուած է բիւզանդական արուեստի մէջ ևս ընդհանրացած ձևակերպութիւնը, բայց դէմքը արևելեան: Պատկերի վերևի մասում ոսկեզօծ մեծ աղեղը երկինքն է ձևացնում: Թուղթն ունի եւ սկսուածքի և լուսանցքի զարդ, եռատերևի, արմաւենիկի եւ թեթև հիւսուածքի մօտիւներով (պատկ. 2), իսկ «Պաւ» մանրանկարչական տառերը արմաւենիկի կոնտուրի վերայ ուռթաձեւերի, օղակների եւ կանթերի մօտիւներով:

Եբրայեցւոց թղթի 1–2 համարի դէմ՝ 123 ա. նկարուած է հիմքում մի աստիճանով մատուռ գոյնզգոյն քարերից (պատկ. 3) 6,50 սմ. մեծութեամբ, ուշադրութեան արժանի, որ գմբեթի այս ձևով արևելեան Հայաստանի մանրանկարչութեան մէջ հընագոյններից մէկն է. գմբէթը սրածայր է, նեղ թմբուկով, որ մեր մանրանկարչութեան մէջ յաճախում է ԺԴ. դարի ա-



Պատկեր 2

Պատկեր 3